ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

«ՀՀՌՑ-ԲՄԱՇՁԲ-18/13» ծածկագրով բաց մրցույթով ՀՀՌՑ ՓԲԸ-ի կարիքների համար Երևանի հաղորդիչ կենտրոնի վարչական երկրորդ մասնաշենքի վերանորոգման աշխատանքների /Աշխատանք/ ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 10.05.2018թ. ժամը 12.00

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ՝**

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/ Հ. Հարությունյանը

**Անդամներ՝**

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Վ. Ավետիսյանը

Ռ. Սահակյանը

Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ Ա. Գևորգյանը

**Հանձնաժողովի քարտուղար՝**

Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ. Նիկոլյանը

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ 04.05.2018-ին հարցում է ուղարկվել «ՀՀՌՑ-ԲՄԱՇՁԲ-18/13» ծածկագրով բաց մրցույթի առաջին տեղը զբաղեցրած «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊ ընկերության՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար «ՀՀՌՑ-ԲՄԱՇՁԲ-18/13» ծածկագրով հրավերով /Հրավեր/ սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

1.2 Գնահատող հանձնաժողովի 27.04.2018թ. թիվ 2 որոշմամբ, ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով առաջին տեղը զբաղեցրած մասնակցից armeps համակարգով էլեկտրոնային եղանակով պահանջվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 08.05.2018թ. ժամը 12.00-ը ներկայացնել սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթը, նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Կարգով սահմանված ժամկետում՝ մինչև 08.05.2018թ. Կոմիտեից առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ստացվել է դրական եզրակացություն /կցվում է/:

2.2 Սույն արձանագրության 1.2 կետով պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետում՝ ԱՐՏ ՊԼԱՍ ՍՊ ընկերության կողմից ներկայացվել է մինչև 08.05.2018թ. /կցվում է/:

3. Հանձնաժողովը որոշեց.

3.1 Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև հանձնաժողովի կողմից ներկայացված թիվ 1 գնահատման թերթիկները /կցվում են/ `1 չափաբաժիններով **ընտրված մասնակից ճանաչել «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ն:**

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0

3.3 Ամփոփման նիստը հրավիրել պայմանագիրը կնքելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 15.00-ին, ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեով:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հ. Հարությունյան

անդամներ՝ _____ Վ. Ավետիսյան

_____ Ռ. Սահակյան

_____ Ա. Գևորգյան

քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյան